«Կլիմայի փոփոխությունը և կանայք» մրցանակաբաշխություն

COP17 հատուկ թողարկում

Թեկնածուի առաջադրման հայտ

Հայտերի ընդունումը՝ 2026 թ. սեպտեմբերի 8–30-ը ներառյալ:

Լրացրեք պատասխանները նշված տեղերում: Ընտրությունների համար նշեք համապատասխան վանդակը: Աստղանիշով (*) դաշտերը պարտադիր են: Պատասխանների տեղերը կարող եք ընդլայնել՝ պահպանելով նշված սահմանաչափերը:

Մանրամասներ՝ https://awardscop17.wice.am/hy
Հարցերի համար՝ awards@wice.am

Հիմնական անվանակարգերում ներկայացվում են վերջին երեք տարիների ընթացքում իրականացված կամ այդ ընթացքում շարունակված գործունեություններ և լուծումներ, որոնք արդեն ունեն ներկայացման ենթակա արդյունքներ: Նույն լուծումը կարող է ներկայացվել առավելագույնը երկու անվանակարգում:

Հաստատո՞ւմ եք, որ թեկնածուն կին է և ներկայացվող գործունեության կամ լուծման մշակման, իրականացման, ղեկավարման կամ առաջմղման գործում ունի հստակ ու հիմնավորելի դեր: *

«Ոչ» պատասխանի դեպքում հայտը չի կարող շարունակվել:

☐ Այո

☐ Ոչ

Անվանակարգի ընտրություն

3.1 Ընտրեք հիմնական անվանակարգը, որի համար ներկայացնում եք հայտը: *

Ընտրեք մեկ տարբերակ՝ ներկայացվող լուծմանը և արդյունքներին առավել համապատասխան:

☐ Կլիմայի փոփոխության մեղմում և կենսաբազմազանության պահպանում

☐ Կլիմայի փոփոխության հարմարվողականություն և էկոհամակարգերի դիմակայունություն

☐ Համայնքային գործունեություն և քաղաքականություն

☐ Կլիմայի և կենսաբազմազանության խնդիրների ու լուծումների լուսաբանում

☐ Կլիմայի և կենսաբազմազանության կրթություն բոլորի համար

☐ Կլիմայական և բնապահպանական ֆինանսավորում ու նորարարության լուծումներ

☐ Երիտասարդները կլիմայական և բնապահպանական գործողություններում

3.2 Ընտրեք երկրորդ անվանակարգը, եթե ներկայացվող գործունեությունը կամ լուծումը համապատասխանում է նաև այլ անվանակարգի: *

Ընտրեք հիմնականից տարբեր մեկ անվանակարգ կամ «Չեմ ընտրում երկրորդ անվանակարգ»:

☐ Չեմ ընտրում երկրորդ անվանակարգ

☐ Կլիմայի փոփոխության մեղմում և կենսաբազմազանության պահպանում

☐ Կլիմայի փոփոխության հարմարվողականություն և էկոհամակարգերի դիմակայունություն

☐ Համայնքային գործունեություն և քաղաքականություն

☐ Կլիմայի և կենսաբազմազանության խնդիրների ու լուծումների լուսաբանում

☐ Կլիմայի և կենսաբազմազանության կրթություն բոլորի համար

☐ Կլիմայական և բնապահպանական ֆինանսավորում ու նորարարության լուծումներ

☐ Երիտասարդները կլիմայական և բնապահպանական գործողություններում

Առաջադրող կողմի տվյալներ

Առաջադրող կազմակերպության կամ կառույցի անվանումը *

Եթե առաջադրում եք որպես անհատ, գրեք «անհատ»:

[Լրացրեք այստեղ]

Հայտը լրացնող և թեկնածուին առաջադրող անձի անունը և ազգանունը *

Կազմակերպության, խմբի կամ թիմի անունից՝ ներկայացուցչի տվյալները:

[Լրացրեք այստեղ]

Ձեր պաշտոնը կամ գործունեության բնույթը *

Կազմակերպության դեպքում՝ պաշտոնը, անհատի դեպքում՝ մասնագիտական գործունեությունը:

[Լրացրեք այստեղ]

Ձեր հեռախոսահամարը *

[Լրացրեք այստեղ]

Ձեր էլեկտրոնային փոստը *

[Լրացրեք այստեղ]

Ինչպե՞ս է առաջադրող կողմը կապված թեկնածուի կամ լուծման հետ: *

Նշեք բոլոր կիրառելի տարբերակները:

☐ Թեկնածուի գործընկերն եմ

☐ Ներկայացվող գործունեության կամ լուծման մասնակից եմ

☐ Ներկայացվող գործունեությանը կամ լուծմանը ծանոթ եմ մասնագիտական գործունեության շրջանակում

☐ Թեկնածուի ղեկավարն եմ կամ աշխատում եմ նրա ղեկավարությամբ

☐ Այլ՝ _____

Տեղյա՞կ է թեկնածուն առաջադրումից և համաձա՞յն է, որ իր տվյալները ներկայացվեն մրցանակաբաշխության հայտում: *

☐ Այո

☐ Ոչ

4 Թեկնածուի տվյալներ

4.1 Անունը և ազգանունը *

Նշեք առաջադրվող թեկնածուի անունը և ազգանունը:

[Լրացրեք այստեղ]

4.2 Բնակության վայրը *

Ընտրեք մեկ տարբերակ:

☐ Արագածոտն

☐ Արարատ

☐ Արմավիր

☐ Գեղարքունիք

☐ Կոտայք

☐ Լոռի

☐ Շիրակ

☐ Սյունիք

☐ Տավուշ

☐ Վայոց ձոր

☐ Երևան

☐ Արտերկիր

4.3 Քաղաքը կամ գյուղը *

Արտերկրում բնակվելու դեպքում նշեք նաև երկիրը:

[Լրացրեք այստեղ]

4.4 Կազմակերպությունը և պաշտոնը կամ մասնագիտությունը *

Եթե որևէ կազմակերպություն չեք ներկայացնում, նշեք մասնագիտությունը կամ գործունեության բնույթը:

[Լրացրեք այստեղ]

4.5 Հեռախոսահամարը *

Նշեք գործող հեռախոսահամար:

[Լրացրեք այստեղ]

4.6 Էլեկտրոնային փոստը *

Նշեք գործող էլեկտրոնային հասցե:

[Լրացրեք այստեղ]

4.7 Ծննդյան տարեթիվը *

Նշեք չորս նիշով, օրինակ՝ 1984:

[Լրացրեք այստեղ]

4.8 Հակիրճ ներկայացրեք թեկնածուի մասնագիտական փորձը *

Սահմանաչափ՝ մինչև 1000 նիշ: Նշեք կրթությունը, մասնագիտությունը, ներկայիս գործունեությունը և կլիմայի փոփոխության կամ կենսաբազմազանության ոլորտների փորձը: Մի կրկնեք լուծման նկարագրությունը:

[Լրացրեք այստեղ]

5 Լուծման հիմնական տվյալներ

5.1 Ծրագրի, նախաձեռնության կամ լուծման անվանումը *

Սահմանաչափ՝ մինչև 150 նիշ: Նշեք կարճ և հասկանալի անվանում:

[Լրացրեք այստեղ]

5.2 Իրականացման վայրը կամ աշխարհագրական ընդգրկումը *

Նշեք մարզերը, համայնքները կամ բնակավայրերը: Ամբողջ Հայաստանի դեպքում՝ «Համապետական»: Մի քանի երկրում իրականացման դեպքում նշեք երկրները և Հայաստանի ընդգրկված տարածքները:

[Լրացրեք այստեղ]

5.3 Իրականացման ժամանակահատվածը *

Նշեք մեկնարկի և ավարտի ամիսը/տարին կամ «Շարունակվում է», օրինակ՝ 03/2024–08/2026:

[Լրացրեք այստեղ]

5.4 Հիմնական գործընկերները՝ առկայության դեպքում

Նշեք կազմակերպությունների, խմբերի կամ անձանց անունները և յուրաքանչյուրի դերը:

[Լրացրեք այստեղ]

5.5 Ֆինանսավորման աղբյուրները

Նշեք ֆինանսավորող կազմակերպությունները կամ ծրագրերը: Սեփական միջոցներով՝ «Ինքնաֆինանսավորում», առանց ֆինանսավորման՝ «Առանց ֆինանսավորման»:

[Լրացրեք այստեղ]

5.6 Լուծման հակիրճ ամփոփումը *

Սահմանաչափ՝ մինչև 2500 նիշ: Ներկայացրեք խնդիրը, նպատակը, առաջարկվող լուծումը, հիմնական գործողությունները և շահառուներին: Խուսափեք կազմակերպության ընդհանուր նկարագրությունից: Արդյունքները և թեկնածուի դերը ներկայացրեք հաջորդ բաժիններում:

[Լրացրեք այստեղ]

6 Ազդեցություն ֆ արդյունքներ

6.1 Ի՞նչ ազդեցություն է ունեցել ներկայացվող գործունեությունը կամ լուծումը կլիմայի և/կամ կենսաբազմազանության վրա: *

Սահմանաչափ՝ մինչև 1800 նիշ: Նշեք՝ ինչ է փոխվել, ինչպես է լուծումը նպաստել փոփոխությանը և ինչու է դա կարևոր: Կարող եք անդրադառնալ մեղմմանը,

հարմարվողականությանը, կենսաբազմազանության կամ էկոհամակարգերի պահպանմանը և վերականգնմանը, ռեսուրսների կայուն օգտագործմանը: Ազդեցությունը կարող է լինել նաև անուղղակի՝ կրթության, հաղորդակցության, քաղաքականության կամ ֆինանսավորման միջոցով: Անդրադարձեք միայն կիրառելի ուղղություններին, իսկ թվային արդյունքները ներկայացրեք հաջորդ հարցում:

[Լրացրեք այստեղ]

6.2 Ի՞նչ կոնկրետ արդյունքներ են ձեռք բերվել և ինչո՞վ են դրանք հիմնավորվում: *

Սահմանաչափ՝ մինչև 2000 նիշ: Ներկայացրեք մինչև երեք հիմնական արդյունք՝ նշելով փոփոխությունը, ժամանակահատվածը և ապացույցները: Հնարավորության դեպքում համեմատեք սկզբնական և վերջնական վիճակը: Նշեք թվային արդյունքները կամ գործելակերպի, գիտելիքների, որոշումների կոնկրետ փոփոխությունները: Տարբերակեք արդեն ձեռք բերված և ակնկալվող արդյունքները: Մի կրկնեք ընդհանուր նկարագրությունը:

[Լրացրեք այստեղ]

6.3 Ինչպե՞ս է գործունեությունը կամ լուծումը միաժամանակ նպաստում կլիմայական նպատակներին և կենսաբազմազանության պահպանությանը: *

Սահմանաչափ՝ մինչև 1000 նիշ: Լրացրեք, եթե առկա է այս կապը՝ բացատրելով փոխկապակցված օգուտները: Միայն մեկ նպատակին ուղղված լուծումները նույնպես կարող են մասնակցել:

[Լրացրեք այստեղ]

7 Առաջնորդություն նորարարություն ֆ շարունակականություն

7.1 Ո՞րն է թեկնածուի դերն ու առաջնորդական ներդրումը ներկայացվող գործունեության կամ լուծման մեջ: *

Սահմանաչափ՝ մինչև 1500 նիշ: Նշեք՝ ինչ է նախաձեռնել թեկնածուն, ինչ որոշումներ է կայացրել կամ ինչ աշխատանք է ղեկավարել: Հիմնավորեք անձնական ներդրումը և դրա արդյունքները կոնկրետ օրինակներով: Ինքնաառաջադրման դեպքում ներկայացրեք Ձեր դերը, թիմային աշխատանքի դեպքում առանձնացրեք թեկնածուի ներդրումը:

[Լրացրեք այստեղ]

7.2 Ինչպե՞ս է գործունեությունը կամ լուծումը նպաստել կանանց մասնակցությանը, հավասար հնարավորություններին և նրանց կարիքների բավարարմանը: *

Սահմանաչափ՝ մինչև 1500 նիշ: Ներկայացրեք կանանց մասնակցությունը որոշումների կայացմանն ու իրականացմանը, հաշվի առնված կարիքները, հաղթահարված խոչընդոտները, կարողությունների կամ առաջնորդության զարգացումը: Նշեք՝ ինչպես են

հաշվի առնվել կլիմայական և բնապահպանական խնդիրների տարբերակված ազդեցությունները: Բերեք լուծմանն առնչվող օրինակներ, հնարավորության դեպքում՝ կանանց և երիտասարդների թվերն ու դերերը:

[Լրացրեք այստեղ]

7.3 Ինչո՞վ է լուծումը նորարարական կամ ստեղծարար *

Սահմանաչափ՝ մինչև 1500 նիշ: Նորարարությունը կարող է լինել տեխնոլոգիական, մեթոդական, ֆինանսական, ձեռնարկատիրական, հաղորդակցական կամ համագործակցային և գնահատվել համայնքային, ոլորտային կամ ազգային մակարդակով: Նշեք՝ ինչով է այն տարբերվում նախկինում կիրառված մոտեցումներից և ինչ առավելություն է տվել: Հստակեցրեք՝ այն նոր է տվյալ համայնքի, կազմակերպության, ոլորտի՞, թե՞ Հայաստանի համար: Նորարարությունը կարող է վերաբերել նաև աշխատանքի կազմակերպմանը, ուսուցմանը, հաղորդակցությանը, ֆինանսավորմանը կամ համագործակցությանը: Հիմնավորեք կոնկրետ օրինակով:

[Լրացրեք այստեղ]

7.4 Ինչպե՞ս է ապահովվում գործունեության կամ լուծման շարունակականությունը և ձեռք բերված արդյունքների պահպանումը:

Սահմանաչափ՝ մինչև 1000 նիշ: Նշեք՝ ինչ քայլեր են արդեն իրականացվել կամ նախաձեռնվել արդյունքների երկարաժամկետ պահպանման համար, և ինչ լրացուցիչ քայլեր են նախատեսվում: Դրանք կարող են ներառել լուծման մշտական կիրառումը, մասնագիտական կարողությունների զարգացումը, ֆինանսավորման ապահովումը կամ կազմակերպական պայմանավորվածությունները: Օրինակ՝ ուսումնական նյութերն արդեն կիրառվում են դպրոցներում, ուսուցիչները վերապատրաստվել են, իսկ նյութերի հետագա օգտագործումը նախատեսվում է ներառել դպրոցների աշխատանքային պլաններում: Հստակ տարբերակեք իրականացված, նախաձեռնված և նախատեսվող քայլերը:

[Լրացրեք այստեղ]

7.5 Որտե՞ղ և ինչպե՞ս կարող է լուծումը կրկնօրինակվել կամ ընդլայնվել *

Սահմանաչափ՝ մինչև 1500 նիշ: Նկարագրեք ընդլայնման կամ կրկնօրինակման ներուժը, հնարավորությունները և անհրաժեշտ պայմանները: Եթե արդեն կա կրկնօրինակման փորձ, նշեք՝ որտեղ է այն իրականացվել և ինչ արդյունքներ են գրանցվել: Հստակ տարբերակեք առկա փորձը և նախատեսվող ընդլայնումը:

[Լրացրեք այստեղ]

7.6 Ի՞նչ աջակցություն կամ համագործակցություն է անհրաժեշտ լուծման հետագա զարգացման համար:

Սահմանաչափ՝ մինչև 1000 բառ:

[Լրացրեք այստեղ]

8 Հիմնավորող նյութեր

8.1 Ներկայացրեք լուսանկարները և կազմակերպության լոգոն՝ հղումով կամ էլեկտրոնային փոստով:

Ներկայացվող գործունեությանը կամ լուծմանն առնչվող 2–3 լուսանկարի և կազմակերպության լոգոյի (առկայության դեպքում) հղումները նշեք ստորև կամ նյութերն ուղարկեք awards@wice.am հասցեին: Նամակի վերնագրում նշեք թեկնածուի անունը, ազգանունը և գործունեության կամ լուծման անվանումը: Հղումները պետք է բացվեն առանց մուտքի թույլտվություն խնդրելու:

[Լրացրեք այստեղ]

Հայտարարություններ ֆ լրացուցիչ տեղեկություններ

Տեղեկությունների հավաստիության հաստատում *

Հաստատում եմ, որ իմ իմացությամբ հայտում ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, իսկ նկարագրված գործողություններն ու արդյունքները՝ իրական: Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ տրամադրել լրացուցիչ պարզաբանումներ:

☐ Հաստատում եմ

Համաձայնություն՝ հայտի գնահատման նպատակով տվյալների մշակմանը *

Համաձայն եմ, որ մրցանակաբաշխության կազմակերպիչները հայտում ներկայացված տվյալներն օգտագործեն մասնակցության պայմաններին համապատասխանությունը ստուգելու, հայտը գնահատելու և հետադարձ կապ ապահովելու համար, ինչպես նաև տրամադրեն գնահատող ժյուրիին: Այլ անձի առաջադրման դեպքում հաստատում եմ, որ ստացել եմ թեկնածուի համաձայնությունը՝ նրա տվյալներն այս նպատակներով ներկայացնելու համար:

☐ Համաձայն եմ

Համաձայնություն՝ թեկնածության և գործունեության հրապարակային ներկայացմանը

Համաձայն եմ, որ թեկնածուի անունը, գործունեության համառոտ նկարագրությունը և տրամադրված լուսանկարներն օգտագործվեն մրցանակաբաշխության կայքում, սոցիալական ցանցերում, տպագիր և էլեկտրոնային նյութերում: Ինքնաառաջադրման դեպքում տալիս եմ իմ համաձայնությունը, իսկ այլ անձի առաջադրման դեպքում հաստատում եմ, որ ստացել եմ թեկնածուի համաձայնությունը: Տրամադրված լուսանկարների հրապարակման համար ունեմ համապատասխան իրավունքը կամ իրավատիրոջ թույլտվությունը:

☐ Համաձայն եմ

Նախատեսվո՞ւմ է արդյոք ներկա գտնվել 2026 թվականի հոկտեմբերի 23-ին՝ COP17-ի Կանաչ գոտում կայանալիք մրցանակաբաշխությանը: *

Պատասխանեք թեկնածուի մասնակցության վերաբերյալ: Պատասխանը նախատեսված է կազմակերպչական նպատակների համար և չի ազդում հայտի գնահատման վրա:

☐ Այո

☐ Ոչ

☐ Դեռ որոշված չէ